



ԶԱՐԳԱՑՄԱՆ

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՄԻՔԱՅԵԼ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ

ՀՊՏՀ միկրոէկոնոմիկայի և ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման ամբիոնի պրոֆեսոր, տնտեսագիտության դոկտոր

ՌԱԶՄԻԿ ՀԱԿՈՒՅԱՆ

ՀՊՏՀ միկրոէկոնոմիկայի և ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման ամբիոնի ասպիրանտ

**ԱՐԴՅՈՒՆԱՔԵՐԱԿԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ
ՄԵՆԱՆԻՉՄԻ ՄՈԴԵԼԱՎՈՐՄԱՆ
ՀԱՅՏՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ**

Ելնելով արդյունաբերական քաղաքականության տեսական ժամանակակից հայացքներից՝ հողվածում դիտարկվել են դրա մշակման և իրականացման տարածաշրջանային մեխանիզմի մոդելավորման ուղղությունը որոշող սկզբունքները: Հիմք ընդունելով համագիտական և համակարգային-սիներգետիկ մոտեցումը՝ ձևակերպվել և ներկայացվել են համապատասխան առաջնային և դրանցից բխող երկրորդային սկզբունքները, որոնք հանդես են գալիս կայուն զարգացման սկզբունքների և տարատեսակ համաձայնությունների ձևով:

Հիմնաբառեր. *արդյունաբերական քաղաքականություն, մեխանիզմ, արդյունաբերական համալիր, մոդելավորում, ինքնակազմակերպում, սիներգետիկա, կառուցվածքային վերակառուցում*

JEL: L5, L52, O25, D01, D04

Արդյունաբերական քաղաքականության մշակման և իրականացման տարածաշրջանային մեխանիզմի մոդելավորման հայեցակարգային տեսանկյունները որոշվում են արդյունաբերական քաղաքականության տե-

սական ու մեթոդաբանական հիմքերով: Դրա համար անհրաժեշտ է առանձնացնել մոդելավորման ուղղությունը որոշող մի շարք սկզբունքներ: Ելնելով արդյունաբերական քաղաքականության տեսական ժամանակակից հայացքներից¹ կարելի է տարբերակել մոդելավորման ուղղությունը որոշող սկզբունքների երեք մակարդակ՝ առաջնային, երկրորդային և երրորդային:

Առաջնային մակարդակին են պատկանում համագիտական և համակարգային-սիներգետիկ մոտեցման սկզբունքները: Նշված մոտեցումը, որը Ա. Թաթարկինի «Տարածաշրջանային արդյունաբերական քաղաքականության ձևավորման մակրոտնտեսական պայմաններից անցում զարգացման նոր ինստիտուտներին» աշխատության հիմքում է, ենթադրում է հանգուցային տարրերի՝ ատտրակտորների առկայությունը²:

Ընդհանուր առմամբ, այդ սկզբունքները հիմնվում են Յու. Վ. Միշարինի աշխատությունում³ առաջարկված տնտեսական տարածության արժեզրկման քառսային տեսության վրա՝ միաժամանակ հաշվի առնելով կազմակերպատնտեսական համակարգերի գործոնային կառավարման սկզբունքները, որոնք ներկայացված են Ա. Պիտկինի, Ե. Ատամանովայի՝ «Կազմակերպատնտեսական համակարգերի կառավարման գործոնային մոդելը» աշխատությունում⁴:

Երկրորդային սկզբունքների հիմքում առաջնային սկզբունքներն են և հանդես են գալիս կայուն զարգացման (Sustainable Development) սկզբունքների և տարատեսակ համաձայնությունների (կոնսենսուս) ձևով:

Արդյունաբերական քաղաքականության մշակման և իրականացման տարածաշրջանային մեխանիզմի մոդելավորման երրորդային սկզբունքները երկրորդայինների ածանցյալներն են և որոշակիորեն դրսևորվում են տարածաշրջանային արդյունաբերական քաղաքականության, պետական-մասնավոր գործընկերության կարգավորիչ ազդեցության գնահատման սկզբունքներում:

Ըստ արդյունաբերական քաղաքականության մշակման և իրականացման տարածաշրջանային մեխանիզմի մոդելավորման առաջնային սկզբունքների՝ արդյունաբերությունը դիտարկվում է որպես տարածաշրջանի տնտեսական տարածության հիմնականախթի տարր, որը կազմ-

¹ Տե՛ս Արդյունաբերական քաղաքականությունը որպես երկրի տնտեսության մրցունակության բարձրացման միջոց/ Ծրագրի ղեկավար՝ Մ. Ս. Մելքունյան, Եր., «Տնտեսագետ», 2014:

Ա. Եղիազարյան, Արդյունաբերական քաղաքականության հիմնախնդիրները և գերակայությունները, Եր., «21-րդ դար», թիվ 5 (51), 2013:

Князева Е.Н., Курдюмов С.П., Структуры будущего: синергетика как методологическая основа футурологии, <http://spkurdyumov.ru/forecasting/struktury-budushhego>

Ивантер В., Требования к промышленной политике в инвестиционном сценарии / В. Ивантер, М. Узяков, А. Широв. «Экономист», 2013, № 5, էջ 3–17:

Игнатюк Н.А., Государственно-частное партнерство. М., «ЮстициИнформ», 2012:

Романова О.А., Национальная модель экономического развития и формирование промышленной политики. "ARS ADMINISTRANDI", 2011, №1, էջ 27–42:

² Տե՛ս Татаркин А.И., Романова О.А., Ченёнова Р.И., Макарова И.В., Региональная промышленная политика: от макроэкономических условий формирования к новым институтам развития. М., «Экономика», 2012:

³ Տե՛ս Мишарин Ю.В., Теоретические подходы к обоснованию хаотической теории инфляции экономического пространства. // Вестник Пермского университета. Серия «Экономика», 2013, Вып. 3(18), էջ 6–12:

⁴ Տե՛ս Пыткин А.Н., Атаманова Е.А., Загоруйко И.Ю., Мишарин Ю.В., Факторная модель управления организационно-экономическими системами. Екатеринбург, «ФГБУН», 2013:

ված է հանգուցային տարրերից՝ ատոտրակտորներից⁵: Գիտական հրապարակումներում⁶ ատոտրակտորները դիտարկվում են որպես բարձր, տեսական մակարդակի ֆենոմեններ, որոնք չեն կարող գոյություն ունենալ անհատական մասերի մակարդակով: Դրանք առաջանում են, երբ համալիր և բարդ համակարգում դրա բազմաթիվ մասեր փոխազդեցության մեջ են գտնվում: Լինելով նաև դինամիկ ֆենոմեններ՝ դրանց ձևավորումը ներկայացնում է ինքնակազմակերպման ընթացք: Երբ համակարգի մասերը ինչ-ինչ պատճառներով վերադասավորվում են և վերակազմակերպում իրենց կապերը, առկա ատոտրակտորը կարող է լուծվել և նոր ատոտրակտոր ձևավորել: Այստեղ առաջ է գալիս կապերի փոփոխության միջոցով համակարգի զարգացման հետևանքների վրա ազդեցություն ունենալու հնարավորությունը: Այսինքն՝ ատոտրակտորն իրավիճակի տեսական զարգացման ուղղություն է, որին համահունչ՝ դինամիկ համակարգը զարգանում է:

Հասարակության քաղաքական, պետական, իրավական գործընթացների հետազոտությունը բացահայտում է դրանցում առկա՝ մշտապես բախվող անհրաժեշտ և պատահական երևույթներ. անընդհատ առաջանում են անկայուն, ոչ դիմացկուն գործընթացներ, որոնք խոչընդոտում են ծրագրավորված զարգացմանը. իրականում դա ենթարկվում է ինքնակազմակերպման սկզբունքի:

Եթե տարածաշրջանի տնտեսական կառուցվածքը չի ապահովում առաջադրված խնդիրների (ամենից առաջ՝ տարածաշրջանի սոցիալական, տնտեսական, էկոլոգիական, ինստիտուցիոնալ և տեխնոլոգիական հավասարակշռված զարգացման պայմանով բնակչության, պետության, բիզնես ընկերակցության շահերին առնչվող) լուծումը, ուրեմն գոյություն ունեցող կառուցվածքը պետք է ենթարկվի վերակառուցման՝ հենվելով գործունակ ատոտրակտորային կառույցների վրա:

Այստեղ առաջ է գալիս այդպիսի կառուցվածքային վերակառուցման հնարավորության հարցը, այսինքն՝ պետք է գոյություն ունենա գործողությունների որոշակի ազատություն, որն ամբողջ սիներգետիկայի և, մասնավորապես, տնտեսական տարածության ինֆլյացիայի քառասային տեսության համաձայն, անվանվում է քառս-հնարավորություն: Ատոտրակտորային կառույցների առկայությունը պայմանավորված է շարժիչ ուժերի (գործոնների) ազդեցությամբ: Տարածաշրջանի տնտեսական տարածությունում գոյություն ունի որոշակի գործոնային ներուժ, և տնտեսական տարածության կառուցվածքային վերակառուցումը հիմնվում է հենց դրա վրա:

⁵ Attract՝ ձգել, գրավել. սիներգետիկայի հիմնական հասկացություններից է, որի սկզբունքները կիրառելի են անկայուն հասարակական համակարգերը դիտարկելիս: Սիներգետիկան գիտական շրջանառություն է ներմուծում սեփական եզրույթները, առանց որոնց անչափ դժվար կլինի հետազոտել և ուսումնասիրել, թվում է՝ անկանխատեսելի վարքագիծ որսնորող, քառսի սահմանային վիճակում գտնվող հասարակական և պետական համակարգերը, քանի որ դրանց հետազոտությունը դասական գիտության մեթոդաբանությամբ լիարժեք չէ և անխուսափելիորեն հանգեցնում է ճգնաժամերի հենց գիտության ոլորտում:

⁶ Տե՛ս **Митина О.В., Петренко В.Ф.**, Синергетическая модель динамики политического сознания, Научная цифровая библиотека ПОРТАЛУС, 2006, <http://www.psychology.ru/library/00076.shtml>

Егоров В.С., Философия открытого мира. М., Московский психо-социальный институт, Воронеж, 2002, էջ 69:

Նշենք, որ տվյալ դեպքում «գործոն» հասկացությունը բազմիմաստ է. այն և՛ ռեսուրս է (աշխատանքի միջոցներ, աշխատանքի առարկաներ, աշխատանք), և՛ հնարավորություն («քառս»), և՛ պոտենցիալ, և՛ շարժիչ ուժ (պետության, տարածաշրջանի, բիզնես ընկերակցությունների, բնակչության շահեր): Ընդ որում, նշվածը վերաբերում է նաև տարածաշրջանային արդյունաբերական քաղաքականության մշակման և իրականացման ոլորտին:

Գործոնային ներուժ ասելով հասկանում ենք կազմակերպական տնտեսական համակարգի արտաքին և ներքին միջավայրերում հնարավոր դրական ու բացասական փոփոխությունները պայմանավորող գործոնների համախումբ⁷, իսկ տարածաշրջանի հարկային և արդյունաբերական ներուժը պետք է դիտարկել որպես դրա մասնավոր դեպքեր:

Արդյունաբերական քաղաքականության մշակման և իրականացման տարածաշրջանային մեխանիզմների խնդիրներից է ոչ միայն վերլուծությունը, այլ նաև այնպիսի տնտեսական համակարգի համադրության (սինթեզ) խնդիրը, ինչպիսին է կազմալուծում պահանջող արդյունաբերական համալիրը:

Որոշակի տարբերություն կա կառավարման օբյեկտի և կառավարող համակարգի համադրության խնդիրների միջև: Իր յուրահատկությունն ունի կառավարվող համակարգի ամբողջականացման խնդիրը՝ ինժեներական, տեխնոլոգիական նախագծումը: Մասնավորապես՝ տնտեսական կիրառելի տարբերություններում հետաքրքրություն է ներկայացնում կառավարող համակարգի համադրության ուսումնասիրությունը, ընդ որում, այդ և կառավարվող համակարգերի միջև գոյություն ունեցող կապերը պետք է հաշվի առնվեն որոշակի հատկանիշները ամրագրելու օգնությամբ: Այսինքն՝ համադրության ընդհանուր խնդիրն այն է, որ կառավարման տվյալ օբյեկտի դեպքում որոշվում է առաջադրված հատկանիշներին՝ այդ թվում նաև օպտիմալության հատկանիշներին համապատասխանող կառավարման համակարգ: Համադրության խնդիրները արդիական են՝ կապված շուկայական տնտեսությունում և հատկապես ճգնաժամային պայմաններում տնտեսական համակարգերի զարգացման միտումների հետ:

Ակնհայտ է, որ արդյունաբերական քաղաքականության մշակման և իրականացման արդյունավետ տարածաշրջանային մեխանիզմի համար որպես հիմք պետք է ծառայի գործոնների կառուցվածքի և գործոնային ներգործության օպտիմալ համադրության խնդիրների լուծումը:

Սակայն, ի տարբերություն տեխնոլոգիական նախագծման, արդյունաբերական քաղաքականության մշակման և իրականացման տարածաշրջանային մեխանիզմում գործոնների կառուցվածքի ու ներգործության համադրումը չի նշանակում տարածաշրջանի տնտեսական տարածությունում արդյունաբերական համալիրի սկզբունքորեն նոր կառուցվածքի ստեղծում, որը կձևավորվի «ոչնչից», այլ ենթադրում է գործող կառուցվածքի ձևափոխում և կատարելագործում: Այսպիսով՝ տեղի է ունենում, այսպես կոչված, օպտիմալ բարելավումների համադրություն: Այդպիսի տնտեսական համակարգի կառավարումը կարող է իրականացվել վերլուծության հիման վրա: Տարածաշրջանի տնտեսական տարածությունում

⁷ Տես Пыткин А.Н., Атаманова Е.А., Загоруйко И.Ю., Мишарин Ю.В., նշվ. աշխ., էջ 183:

նում արդյունաբերական համալիրի կառուցվածքի համադրման մեթոդների և մոդելների մշակումը ենթադրում է համակարգի կազմակերպման օպտիմալ տարբերակների (գործառնական, կազմակերպական, տեղեկատվական, ալգորիթմային, տեխնիկական) ընտրության ձևայնացված ընթացակարգերի ստեղծում:

Սակայն տարածաշրջանի տնտեսական տարածությունում հանդես եկող արդյունաբերական համալիրը բարդ, բազմազանության բարձր մակարդակ ունեցող համակարգ է: Եթե առաջնորդվենք հետազոտողի տրամաբանությամբ և առողջ դատողությամբ, ապա պարզ է դառնում, որ այդ համակարգի ծագման արհեստական բնույթը վկայում է դրա կատարյալ կազմակերպվածության մասին: Եթե անզամ որոշակի փուլերում անհնար է բացատրել դրա վարքը, այնուամենայնիվ, պետք է ընդունել, որ գոյություն ունի տվյալ վարքագծի որևէ պատճառ: Այդպիսի համակարգերի գործելու տեսանելի անորոշությունը վկայում է սկզբունքորեն կառավարելի ու կազմակերպելի համարվող տնտեսական գործընթացների զարգացման և շարժման օրենքների վերաբերյալ անտեղյակության մասին:

Տարածաշրջանի արդյունաբերական քաղաքականության մշակման ու իրականացման դեպքում բնական է համարվում տվյալ տնտեսական տարածությունում հանդես եկող արդյունաբերական համալիրի և այնտեղ տեղի ունեցող գործընթացների մասին սեփական պատկերացումներն ի մի բերելու ու վերլուծելու ձգտումը, որը դրդում է, գործունեության նպատակին համապատասխան, ստեղծել կազմակերպված կառավարման համակարգի մեխանիզմի վերաբերյալ հայեցակարգ:

Մինևույն ժամանակ, բնական է համարվում որոշակի համակարգ ձևավորելու և դա այնպիսի տեսքով ներկայացնելու ձգտումը, որով հնարավոր է ապահովել առաջադրված նպատակների իրագործումը: Սա համարվում է գործոնների կառուցվածքի և գործոնային ազդեցության համադրման ոչ դյուրին խնդիր, որը պետք է ապահովի դրական ազդեցության խթանումը և բացասական ազդեցության կանխումը:

Մյուս կողմից՝ տարածաշրջանի տնտեսական տարածությունում արդեն գործող, ավելի վաղ ձևակերպված նպատակներին համապատասխան աշխատող արդյունաբերական համալիրին առնչվող որոշակի նպատակների իրագործումը որոշիչ դեր է խաղում ոչ միայն համադրության խնդրի առաջադրման հարցում, այլ նաև տարածաշրջանի տնտեսական տարածությունում առկա ամբողջ արդյունաբերական համալիրի ինքնակազմակերպմանը, այսինքն՝ գործոնների կառուցվածքի ու գործոնային ազդեցությանը կարգավորման հատկություններ վերագրելու գործում: Ընդ որում, այդ ամենը պետք է կազմակերպվի այնպես, որ տարածաշրջանային արդյունաբերական համալիրը գործոնների փոխազդեցության շնորհիվ ընդունակ լինի դիմակայելու արտաքին և ներքին բացասական ցնցումներին:

Ինքնակազմակերպման հատկությունը բազմաթիվ արդիական խնդիրների համատեքստում որպես ցնցումների կառուցվածքային կարգավորման գործընթաց սահմանելը հիմք է հանդիսանում այնպիսի բարդ տնտեսական համակարգի կառուցման որոշիչ կանոնների ձևակերպման համար, ինչպիսին տարածաշրջանի արդյունաբերական համալիրն է, որն օժտված կլինի ինքնակազմակերպման հատկությամբ: Դա վերաբերում է

նաև արդյունաբերական քաղաքականության մշակման և իրականացման տարածաշրջանային մեխանիզմին, որը վերարտադրում է ինքնակազմակերպման հատկությունը տարածաշրջանի արդյունաբերական համալիրի շրջանակներում:

Տարածաշրջանի արդյունաբերական քաղաքականության մշակման և իրականացման պարագայում հարկ է առանձնացնել երկու գործընթաց՝ տարածաշրջանի արդյունաբերական համալիրի տարածքային ինքնակազմակերպումը և տարածաշրջանային արդյունաբերական համալիրի պետական կազմակերպումը: Դրանք փոխկապված են ոչ միայն այն պատճառով, որ տարածաշրջանային արդյունաբերական համալիրի ձևավորմանը անպայման նախորդում է արդյունաբերական ձեռնարկությունների տարածքային ինքնակազմակերպումը, այլ նաև այն պատճառով, որ հետագայում արդյունաբերական գործունեության ինքնակազմակերպումը տեղի է ունենում պետության ազդեցության ներքո՝ սոցիալ-տարածքային համակարգի շրջանակներում:

Արդյունաբերական գործունեության տարածքային ինքնակազմակերպման գործընթացի վրա կարող են ազդել այլ երկրներ ևս, օրինակ՝ անդրազգային ընկերությունների, ներմուծման-արտահանման պայմանների, տնտեսական պատժամիջոցների և այլնի միջոցով: Ե՛վ մեկ, և՛ մյուս դեպքում կան գործոններ, որոնք կարգավորում են այդ երկու գործընթացների տարբեր հատկությունների համընկնումը:

Արդյունաբերական քաղաքականության մշակման և իրականացման տարածաշրջանային մեխանիզմի մոդելավորման երկրորդային սկզբունքներն ինչպես բուն արդյունաբերական քաղաքականության մշակման ու իրականացման տարածաշրջանային մեխանիզմի մոդելի, այնպես էլ դրա գործունեության ոլորտում հանդես եկող ինքնակազմակերպման և ինքնահաշվեկշռման առաջնային սկզբունքների ածանցյալներն են:

Տվյալ սկզբունքները բավական ներդաշնակ ձևով հաշվի են առնվում կայուն զարգացման սկզբունքների շրջանակներում և, մասամբ, դրսևորվում են տարատեսակ համաձայնություններում (Վաշինգտոնյան, Պեկինյան, Մունբայի, Սեուլյան), որոնք առաջարկվել և իրագործվում են միջազգային ոլորտում:

Ակնհայտ է, որ շուկայական հարաբերությունները կգործեն ցանկացած ձևի սեփականության պարագայում, քանի որ ժամանակակից տնտեսության մեջ աշխատանքի բաժանման բարձր մակարդակի դեպքում միշտ կկատարվի աշխատանքի արդյունքների փոխանակում (այն, ինչը պայմանականորեն անվանվում է «շուկա»): Սակայն շուկայի «անտեսանելի ձեռքի» բացարձակացումը պայմանավորեց Վաշինգտոնյան համաձայնության անհնարինությունը և, ինչպես փորձը ցույց տվեց, դարձավ ավելի թույլ զարգացած երկրների տնտեսական անկախության կորստի հաշվին անդրազգային ընկերությունների միջոցով որոշ երկրների կողմից այլ երկրների գաղութացման հիմնական սկզբունք:

Արդյունաբերական քաղաքականության մշակման և իրականացման տարածաշրջանային մեխանիզմի մոդելավորման համար առավել հեռանկարային պետք է համարել կայուն զարգացման սկզբունքները, որոնք

ամրագրված են հայկական⁸ և միջազգային օրենսդրություններում, ունեն իրագործման հարուստ համաշխարհային փորձ, սակայն, միևնույն ժամանակ, համարվում են նոոսֆերային տնտեսագիտության⁹ ձևավորման անցումային փուլ, այսինքն՝ մեր պարագայում, իմաստային առումով, որպես հեռանկարային հիմք են ծառայում տարածաշրջանի արդյունաբերական քաղաքականության զարգացման համար:

Կայուն զարգացման տեսանկյունից ինքնակազմակերպման սկզբունքն ունի ածանցյալներ, որոնք անվանում ենք երկրորդային:

- Ամբողջականության և ինքնաբավության սկզբունքներ: Բառարանային հոդվածների համաձայն՝ համակարգի ամբողջականությունը դրա հատկությունները տարրերի գումարային հատկություններին հանգեցնելու և այդ տարրերի հատկությունների հիման վրա ամբողջի հատկությունները ստանալու սկզբունքային անհնարինությունն է, յուրաքանչյուր տարրի, դրա հատկությունների և համակարգում առկա հարաբերությունների կախվածությունը՝ ամբողջի ներսում զբաղեցրած տեղից, գործառույթներից և այլնից: Համակարգի ամբողջականությունը նշանակում է, որ դրա յուրաքանչյուր տարր իր ներդրումն ունի ամբողջ համակարգի նպատակային գործառույթի իրականացման մեջ:

Ինքնաբավությունը համակարգի ամբողջականության հոմանիշն է և որոշում է դրա ստորին սահմանը: Ինքնաբավ համակարգերը, անկախ արտաքին ազդեցություններից, օժտված են սեփական ներքին գործառույթները կատարելու հատկություններով:

- Ինքնակարգավորման (ինքնապահպանման) սկզբունք: Ինքնակարգավորումը ներառում է այն գործընթացները, որոնք կապված են կառուցվածքի ներքին փոխակերպումների հետ, դուրս չեն գալիս դրա սահմաններից, իրագործվում են կառուցվածքի տարրերի կողմից և ուղղված են համակարգի գործունակության պահպանմանը: Կիրեռնետիկական համակարգերում ինքնակարգավորման համար լայնորեն կիրառվում է բացասական հետադարձ կապի սկզբունքը: Առավել կատարյալ համակարգերում իրականացվում է կորցրած գործառույթների փոխհատուցում համակարգի տարրերի միջև դրանց վերաբաշխման հաշվին:

Աստիճանակարգային (հիերարխիկ) համակարգերի երկակիության օրինաչափությունից հետևում է, որ կայուն համակարգը գտնվում է հավասարակշռության մեջ, եթե դրա երկու հակադիր բևեռների միջև պահպանվում է հավասարակշռությունը: Այդ ժամանակ տվյալ համակարգում տեղի ունեցող գործընթացները միշտ կընթանան ճոճանակի սկզբունքով, այսինքն՝ համակարգը հակադիր բևեռների մի կողմից կշարժվի դեպի մյուսը՝ այդպիսով իրագործելով ինքնակարգավորման սկզբունքը, որն իր արտացոլումն է գտնում հակադրությունների միասնության և պայքարի դիալեկտիկական օրենքում:

- Ինքնավերարտադրման սկզբունք ասելով հասկանում ենք համակարգի՝ սեփական կառուցվածքը կրկնօրինակելու ու բարդացնելու, աստիճանակարգային մակարդակներն ավելացնելու

⁸ Տե՛ս Կայուն զարգացման ծրագիր, հավելված ՀՀ Կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի N 1207 - Ն որոշման. <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=51206>

⁹ Տե՛ս Խոսֆերային էկոնոմիկա ինչպես նոր գիտական պարադիգմա անկրիզիսից հետո: <http://xn--80aaa5asite.xn--p1ai/Book/book-08-html/book-10-07-1-1.html>

հատկությունը, ընդ որում, էվոյուցիայի որոշակի փուլում, կառուցվածքային ու գործառնական սահմանափակության և աստիճանակարգային համակարգերի մեկուսացվածության օրինաչափություններին համապատասխան, այս սկզբունքն արտացոլում է նոր որակի ձեռքբերմամբ ուղեկցվող վերափոխման ունակությունը:

- Ինքնազարգացման սկզբունքն արտացոլում է կառուցվածքային կազմակերպման որակի բարելավմանը նպաստող զարգացման ուղղվածությունը:
- Ինքնանորմավորման սկզբունքն արտացոլում է ոչ թե ներհամակարգային, այլ միջհամակարգային մակարդակում զարգացման հաջորդականության օրինաչափությունը: Տվյալ սկզբունքը մատնանշում է տարաբնույթ համակարգերը միմյանց հետ համեմատելու հնարավորությունը, ինչը կարող է կիրառվել ինքնակարգավորման և ինքնազարգացման սկզբունքների գործադրման նպատակով:
- Ինքնավերածնունդի սկզբունքը համարվում է ինքնավերարտադրման սկզբունքի հատուկ դեպք: Դա անգիտակցական ուժերի ինքնաբերականությունը (իներցիա) հաղթահարող գիտակցության ակտիվ ուժի հետևանքն է: Տվյալ սկզբունքն արտացոլում է կայուն զարգացումից նոոսֆերային տնտեսությանն անցումը¹⁰: Տնտեսության նոոսֆերային զարգացումը ենթադրում է շուկայական հարաբերությունների դերի էական նվազեցում (կամ դրա լրիվ բացակայություն), պլանային տնտեսության խելամիտ վարում¹¹:

Թվարկված սկզբունքները փոխլրացնում են միմյանց. «ինքնաբավություն–ամբողջականություն», «ինքնակարգավորում–ինքնապահպանում», «ինքնավերարտադրում–ինքնանորմավորում», «ինքնազարգացում–ինքնավերածնունդ»: Ընդ որում, յուրաքանչյուր այդպիսի զույգում առկա փոխհարաբերությունները բավարարում են ինքնաբավության պահանջները: Այդ տեսանկյունից՝ կայուն զարգացման սկզբունքը մենք դիտարկում ենք որպես սոցիալական, տնտեսական, էկոլոգիական և ինստիտուցիոնալ բաղադրիչների հաշվեկշիռ բնակչության՝ տեխնոլոգիական զարգացման առաջանցիկ պահանջմունքների դեպքում:

Այսինքն՝ ելնելով առաջնային համագիտական և սիներգետիկայի սկզբունքներից,¹² արդյունաբերական քաղաքականության մշակման և իրականացման տարածաշրջանային մեխանիզմի մոդելավորման երկրորդային սկզբունքները ձևակերպվում են հետևյալ կերպ.

1. Արդյունաբերական քաղաքականության մշակման և իրականացման տարածաշրջանային մեխանիզմն իր բարդության աստիճանը

¹⁰ Տե՛ս **Пыткин А.Н., Атаманова Е.А., Глезман Л.В., Мишарин Ю.В.**, Концептуальные основы экономической теории города. Пермь, Институт экономики Уральского отделения РАН, 2012:

¹¹ Տե՛ս **Головчанская Е.Э.**, Маркетинг в ноосферной экономике: проблемы, тенденции развития: <http://www.elib.bsu.by/bitstream/123456789/92007/1>

¹² Տե՛ս **Տ. Սիմոնյան**, Սիներգետիկայի հիմնական հասկացությունների և սկզբունքների կիրառելիությունը անկայուն հասարակական համակարգերը դիտարկելիս. <http://armscoop.com/2011/11/armscoop>

- և սեփական մասերի (գործառույթների) տարբերացումը աստիճանաբար (կամ անընդհատ) ավելացնող ամբողջականություն է:
2. Արդյունաբերական քաղաքականության մշակման և իրականացման տարածաշրջանային մեխանիզմը փոխկապված մասերից կազմված կառուցվածք է, երբ մի մասում տեղի ունեցող փոփոխությունները հանգեցնում են այլ մասերում տեղի ունեցող փոփոխությունների: Նույնը վերաբերում է նաև դրա գործունեության ոլորտին, երբ արդյունաբերական քաղաքականությունը դիտարկվում է որպես փոխկապված մասերից կազմված կառուցվածք, ընդ որում, մի մասում տեղի ունեցող փոփոխությունները հանգեցնում են այլ մասերում տեղի ունեցող փոփոխությունների:
 3. Արդյունաբերական քաղաքականության մշակման և իրականացման տարածաշրջանային մեխանիզմը օրգանական ինքնակարգավորվող համակարգ է, որը ձգտում է հասնել կայունության և հավասարակշռության ինչպես իր ներսում, այնպես էլ գործունեության ոլորտում:
 4. Արդյունաբերական քաղաքականության մշակման և իրականացման տարածաշրջանային մեխանիզմը ինքնապահովող համակարգ է, որն ունի որոշակի հիմնարար պահանջմունքներ և կարիքներ, առանց որոնց բավարարման հնարավոր չէ դրա գոյությունը, կայունության կամ հավասարակշռության պահպանումն ինչպես ներսում, այնպես էլ գործունեության ոլորտում:

Օգտագործված գրականություն

1. Արդյունաբերական քաղաքականությունը որպես երկրի տնտեսության մրցունակության բարձրացման միջոց / Ծրագրի ղեկավար՝ Մ. Մելքումյան, Եր., «Տնտեսագետ», 2014:
2. Եղիազարյան Ա., Արդյունաբերական քաղաքականության հիմնախնդիրները և գերակայությունները, «21-րդ դար», թիվ 5 (51), 2013:
3. Կայուն զարգացման ծրագիր, հավելված ՀՀ Կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի N 1207 - Ն որոշման, <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=51206>
4. Մինոյան Տ., Սիներգետիկայի հիմնական հասկացությունների և սկզբունքների կիրառելիությունը անկայուն հասարակական համակարգերը դիտարկելիս. <http://armscoop.com/2011/11/armscoop>
5. Князева Е.Н., Курдюмов С.П., Структуры будущего: синергетика как методологическая основа футурологии: <http://spkurdyumov.ru/forecasting/struktury-budushhego>.
6. Ивантер В., Требования к промышленной политике в инвестиционном сценарии /В.Ивантер, М.Узяков, А.Широв/. “Экономист”, 2013, № 5.
7. Игнатюк Н.А., Государственно-частное партнерство. М., “Юстиц-Информ”, 2012.
8. Романова О.А., Национальная модель экономического развития и формирование промышленной политики. ARS ADMINISTRANDI, №1, 2011.
9. Татаркин А.И., Романова О.А., Ченёнова Р.И., Макарова И.В., Региональная промышленная политика: от макроэкономических условий формирования к новым институтам развития. М., “Экономика”, 2012.

10. Мишарин Ю.В., Теоретические подходы к обоснованию хаотической теории инфляции экономического пространства. Вестник Пермского университета. Серия “Экономика”, Вып. 3(18), 2013.
11. Пыткин А.Н., Атаманова Е.А., Загоруйко И.Ю., Мишарин Ю.В., Факторная модель управления организационно-экономическими системами. Екатеринбург, “ФГБУН”, 2013.
12. Митина О.В., Петренко В.Ф., Синергетическая модель динамики политического сознания, Научная цифровая библиотека “Порталус”, 2006: <http://www.psychology.ru/library/00076.shtml>
13. Егоров В. С., Философия открытого мира. М., Московский психосоциальный институт, Воронеж, 2002.
14. Ноосферная экономика как новая научная парадигма внекризисного развития общества: http://xn_80aaa5asite.xn_p1ai/Book/book-08-html/book-10-07-1-1.html
15. Пыткин А.Н., Атаманова Е.А., Глезман Л.В., Мишарин Ю.В., Концептуальные основы экономической теории города. Пермь, Институт экономики Уральского отделения РАН, 2012.
16. Головчанская Е.Э., Маркетинг в ноосферной экономике: проблемы, тенденции развития: <http://www.elib.bsu.by/bitstream/123456789/92007/1>

МИКАЕЛ МЕЛКУМЯН

Заведующий кафедрой Микроэкономики и организации предпринимательской деятельности АГЭУ, доктор экономических наук, профессор

РАЗМИК АКОПЯН

Аспирант кафедры Микроэкономики и организации предпринимательской деятельности АГЭУ

Концептуальные аспекты моделирования регионального механизма формирования и реализации промышленной политики. – Исходя из современных теоретических взглядов индустриальной политики, в статье рассматриваются принципы, определяющие направление разработки индустриальной политики и моделирования регионального механизма реализации. Принимая за основу общенаучный и системно-синергетический подход, сформулированы и представлены первоочередные принципы, определяющие направление моделирования и основанные на них вторичные принципы, выступающие в виде принципов “стабильного развития” и различных соглашений.

Ключевые слова: *индустриальная политика, механизм, индустриальный комплекс, моделирование, самоорганизация, синергетика, структурная перестройка.*
JEL: L5, L52, O25, D01, D04

MIKAEL MELKUMYAN

Head of the Chair of Microeconomics and Entrepreneurial Activities at ASUE, Doctor of Economics, Professor

RAZMIK HAKOBYAN

PhD Student at the Chair of Microeconomics and Entrepreneurial Management at ASUE

Conceptual Aspects of Regional Mechanism Simulation for the Formation and Implementation of Industrial Policy. – Based on current theoretical views of industrial policy, the article discusses the principles that determine the direction of the development of industrial policy and modeling of regional implementation mechanism. Based on the general scientific and system-synergetic approach, priority principles that determine the direction and simulation and secondary principles based on them, acting as the principles of "sustainable development" and the various agreements, have been formulated and presented.

Key words: *industrial policy, mechanisms, industrial complex, simulation, self-organization, synergy, restructuring.*
JEL: L5, L52, O25, D01, D04